

## ՄՊԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ


Անասունների առաջնային վերամշակման մսի արտադրամաս: Շինությունն իրենից ներկայացնում է մետաղական հիմնակմախքով կարկասային շենք: Հիմքերը միաձույլ երկաթբետոնից: Տանիքը և արտաքին պատերը նախատեսված է իրականացնել սենդվիչ պանելներով: Արտադրամասը համալրված է մսի առաջնային վերամշակման ամբողջական տեխնոլոգիական ցիկլի համար անհրաժեշտ բոլոր սարքավորումներով և կոմունիկացիաներով: Արտադրամասը համապատասխանում է ՀՀ սանիտարահիգիենիկ պահանջներին, «Մսի և մսամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգին, հրդեհային և էլեկտրաանվտանգության նորմերին, աշխատանքի անվտանգության կանոններին: Արտադրամասի սարքավորումը և տարածքի սանիտարական մշակումն իրականացվում է մսի արտադրության մաքսային միության ցուցումներին համապատասխան: Արտադրամասի սարքավորումը պատրաստված է բարձրորակ սննդի չժանգոտվող պողպատից:

### Արտադրամասի նշանակությունը

Խոշոր եղջերավոր անասունի սպանդ և առաջնային վերամշակում, ստացմամբ, պահպանմամբ և հետագա իրացմամբ.

- Թարմ միս, սառեցված կիսաջանդակներով և քառորդներով,
- Մաքրված ենթամթերք:

### Մպանդանոցի ճարտարապետանախագծային որոշում (օրինակ)



- |                                    |  |
|------------------------------------|--|
| 1. Մսի արտադրամաս                  | 6. Աղբամանների համար հարթակ                      |
| 2. Տրանսպորտի մուտք                | 7. Թափոնների հավաքման համար տրանսպորտի մուտք/ելք |
| 3. Տրանսպորտի ելք                  | 8. Լուսավորող հենակներ                           |
| 4. Հումքի ընդունման վայր           | 9. Սանտեխնիկական դռնակ                           |
| 5. Պատրաստի արտադրանքի բեռնման վառ |  |

## Արտադրամասի տեխնիկական բնութագիր

Պարամետր	Չափ. միավ.	Նշանակություն
<b>1. Չասփեր (գաբարիտային)</b>	մմ x մմ x մմ	
<b>2. Էլեկտրամատակարարում</b>		
Սահմանված հզորությունը	կՎտ	12,5
Մուտքի յարումը	Վ	380
5 յարային էլեկտրական ցանց		L1, L2, L3, Γ, PE
<b>3. Ջրամատակարարում</b>		
Մատակարարվող ջրի որակը		ՍանՊահՎ հետ համապատասխան
Ջրի ծախսը	մ <sup>3</sup> /օրը	1
Մատակարարվող ջրի ճնշումը	ատմ	2 -ից 4
<b>4. Շահագործման կլիմայական պայմանները</b>		
Շրջակա միջավայրի ջերմաստիճանը	°C	- 45-ից + 50
Չնային ծանրաբեռնվածությունը	կգ/մ <sup>2</sup>	100-200

## Արտադրամասի ընդհանուր արժեքը

Կոնստրուկցիա (սյուները և հեծանները) հավաքվող նոր պողպատյա պրոֆիլներից կամ ծոված էլեմենտներից, ամրացված բարձր ամրության հեղուսներով և պատված երկշերտ գրունտով և հակակոռոզիոն ներկով:

Պատեր՝ սենդվիչ պանելներ (արտաքին պատերը 150 մմ, թեթև եռաշերտ հրակայուն, ներքին պատերը՝ 60 մմ, հրակայուն):

Տանիք (Միալանջ, թեքությունը 5 %, ծածկը՝ սենդվիչ պանել՝ 150-200 մմ):


Վերը նկարագրած սպանդանոցային մասնաշենքի արժեքը հորիզոնական մակերեսից 1 քմ-ի համար 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ

Գինն իր մեջ ներառում է՝

- Մետաղական կոնստրուկցիաներ
- Տանիք (ջրահեռացման համակարգով)
- Պատերի և տանիքի ծածկ(սենդվիչ պանելներ)
- Ինժեներական համակարգեր (ջուր, գազ, էլեկտրականություն, ջեռուցում, կոյուղի, օդափոխություն կառույցի ներսում)
- Ներքին հարդարման աշխատանքներ
- Դռներ և պատուհաններ (մետաղապլաստե շրջանակներով)
- Կառույցի մոնտաժ և շահագործում (երաշխիքային շահագործում՝ շահագործման պահից սկսած 12 ամիս):

Արժեքն իր մեջ չի ներառում ԱԱՀ:

Արտադրամասի տեղաբաշխման և հիմնական սարքավորման կառուցվածքի սխեմայի տարբերակներից մեկը 5-7 գլխաքանակի ԽԵԱ-յի համար:



## Հիմնական սարքավորումների ցանկ

- Խլացման բոքս ԽԵԿ
- Երկմակարդակ հարթակ
- Կաշի հնող սարք
- Աղիքների հեռացման հարթակ
- Պնեվմո հարթակ
- 2 հատ եռանկյուն շարժակ գլուխների և ոտքերի համար
- Արյան հավաքման թաշտակ
- Աղիքների տեղափոխման թաշտակ
- Խլացման բոքս Խոզ/Մեկ
- Հարթակներ Մեկ-ի մորթի համար
- Հոսքագիծ Խեկի
- Հոսքագիծ Մեկի
- Սառնարանի ներսի կախիչներ
- 40 հատ լիսեռային կախիչներ

### Արտադրամասի մատակարարման պայմաններ՝

1. Մոնտաժային և շահագործման աշխատանքների ժամկետը՝ 30 օրից սկսած:
2. Երաշխիքային սպասարկում՝ մոնտաժային և շահագործման աշխատանքների ավարտման պահից սկսած 12 ամիս: Երաշխիքային վերանորոգման ժամկետ՝ 1 օրից սկսած: Երաշխիքային ժամկետը լրանալու դեպքում իրականացվում է սերվիսային սպասարկում:
3. Պատրաստի շինության արժեքը որոշվում է ըստ նախագծի և անասունների գլխաքանակի:

### Մեր կառույցների առավելություններն են՝

- Մեր կառույցների ինքնարժեքը տրադիցիոնից ցածր է մինչև 15% -ով
- Շենքի կառուցումը արագ է: Սպանդանոցների դեպքում 30-45 օրում
- Ոչ մի զանգվածային հիմք չի պահանջվում
- Շինարարությունը կարելի է իրականացնել նույնիսկ ձմռանը
- Շինարարությունը հնարավոր է իրականացնել առանց ծանր բեռնաթափման սարքերի օգտագործման: